

ԶԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻ

ՍՏՈՒԵՐ ԵՒ ԱՐՁԱԳԱՆԳ

Ա., Գ. ԵՒ Դ.

ՈՒՂԻՆԵՐ

Ե. ԵՒ Զ.

1975-ին Փարիզի մէջ՝ «Քաթրա» Ընկերակցութիւնը իրախօսութեն
կը հրատարակէր «Ստուեր եւ Արձագանգ» խորագրուած հատորիկ մը,
որ կը պարունակէր ընդամենը՝ վեց կտոր: Շարքէն զուրս մնացած էին
Գ. եւ Դ. համարները, որոնք այդ թուականին՝ գրուած էին արդէն
իսկ: Աւելի ուշ, 1985-ին, իրախօսին շարքին աւելցուց Ա. համարը
կրօղ կտորը: «Ստուեր եւ Արձագանգ»ը լրացնող այս երեք կտորները
կը ներկայացնենք հոս, Ա. Գ. եւ Դ. նշումներով:

1985-ին իրախօսին նոր շարքի մը ձեռնարկած է, «Ուղիներ»
վերնագրով: Ատկէ ալ երկու կտոր կը հրամցնենք հոս ըն-
թերցողներուն:

ՍՏՈՒԵՐ ԵՒ ԱՐՁԱԳԱՆԳ

Ա.

Կոստանտնուպոլիս, Յամի Տեառն 450 եւ Յուլիսի 30:

Օղբ տաք է, հեղձուցիչ:

Նկարագարդ պատուհաններն արեւելեան հոովմէական կայսերական
պալատին

Լայն կը բացուին հրապարակին վրայ Ջիարձակարանի
ուր կառարշափ քառասմբակ թոփումներուն կ'արձագանգեն
յաղթանակի բոմբիւմները գերագրգիռ ամբոխին:

Իրիկուն է:

Դեղին փոշին որ ամպի պէս կը բարձրանայ
եգիպտական կոթողին շուրջ դարձավազող մարտակառքերէն
մայրամուտին շողերուն հետ կը թափանցէ լուսամուտէն
կ'ոսկեզարդէ խճանկար գետինը մեծ դահլիճին
ուր գահին վրայ փլած նստած է Թէոդոս կայսրը հիւանդ սպառած
եւ դափնեխոյրը դրած մէկդի
այրող ճակատն ու երեսը կը արբէ
վարշամակով քացախ ջրի թաթխուած:

Դիմացն են ոտքի Հայոց դեսպաններն

Հմայեակը Մամիկոնեան եւ Ատովմը Գնունի
Ամատունի Վահանը եւ Մեհրուժանն Արծրունի
հոովմէացի բարձրաստիճան գորականի
պղնձապատ հոմ կաշիէ զգեստներով
որոնք յատուկ բոյր մը կը խառնեն քացախի հոտին
եւ մէյթ կը վառին տմոյն ցոլքով մը զուսպ ու պրկուած
երբ ոտք կը փոխեն անոնք սրտնէդ, անհամբեր:

— Խունկ ծխեցէք, խունկ ծխեցէք քիչ մը այստեղ
օ՞դն է արդեօք անշնչելի, թէ ես շնչել չեմ կարող
մթնոլորտն է ծանր այսքան, թէ վիճակս է ծանրացած
խունկ կ'ուզեմ խո՛ւնկ... մէկ օր սուաջ, մէկ օր ետքը...
իճչպէս որ է վաղը միւս օր
խունկ պիտի ծխէք սնարիս վերեւ...

— Կ'ըսէ Թէոդոս Փոքր հիմա քիչ մ'ալ գահին վրայ փոքրացած
խօսք ուղղելով դեսպաններու գլխատրին՝ Հմայեակին Մամիկոնեան

մեր սիրելի հայ հիւրերն ալ կարծեմ կ'ախորժին անկէ քանի որ
խումկով մոմով սուրբ պատարագ կը մատուցանեն
ամէն անգամ պատերազմի երթալէ առաջ:

Ես բարեպաշտ եմ եւ այդպէս ալ պիտի մեռնիմ
բայց իրենց տեղ՝ յաղթանակէ վերջ միմիայն
ես գոհութեան սուրբ պատարագ կ'ընծայէի
որովհետեւ աղօթքով չէ որ պատերազմ կը շահուի
այլ լաւ զէնքով լաւ զինուորով
ինչ որ եկած էք խնդրել, ինչ որ ձեզի խոստացայ տալ

պաշտպանութեան համար մեր սուրբ հաւատքին
ինչպէս նաեւ արեւելեան սահմաններուն
այդ հեթանոս Յազկերտին դէմ եւ քարքարոս միւս ցեղերուն
որոնց միակ նպատակն է ոտնակոխել ձեր երկիրը
հասնելու համար Ոսկեքաղաքին
զոյգ ծովերու զոյգ ցամաքի վրայ իշխող այս դշխոյին անգուգակեան
փեշերուն:

Բարձ-պետութիւն կամ միջանկեալ տէրութիւն
կ'անուանենք մենք ձերիցին պէս երկրամասերն
այնպէս ինչպէս մեր կրկեսներու կոփամարտիկներն
կակուղ ու փշոտ բարձեր կը կապեն
իրենց մարմնին շուրջ եւ անդամներուն
որպէսզի երբ միւս մրցորդը բռնուցք զարնէ՝ ինք չազդուի
իսկ դիմացինը վիրատորուի, արիւնի....:

Ձեզի համար դժբախտաբար ճակատագիրն այս է եղեր ձեր երկրին
քանի այնքան շատ են լեռներն
խկական փուշ՝ կոխել անցնիլ ուզողներու ոտքին տակ
եւ այդքան քիչ՝ զանոնք սիրող պաշտպանողն հոգելին:

Բազմանալու էք, պատրիկներ Հայոց
բայց այս միտքն մէջ ձեզի նեցուկ չէ
ժուժկալութիւնը քրիստոնէական
կիներու հանդէպ ամէն ազգէ եւ գոյնէ
պէտք է նախ բազմապատկէք ամրոցներու շինութիւնը, բայց կարծեմ
ատոր մէջ ալ ձեր տաճարներուն պիտի պատկանի
առաջնութիւնը՝ մեծ տարբերութեամբ:

Իսկ ձեր բանակը կը նմանի առանց ձեռքի առանց ոտքի տարօրինակ հսկայի
մը

որ բազմաթիւ գլուխներ ունի
որոնք իրարու համաձայն չեն միշտ.
սակայն կարծեմ ինձի ըսիք թէ այս անգամ
ձեր այլախոհ նախարարներն միացած են մէկ գլխու շուրջ
որ ձեր կտրիճ եղբայրն է:

Տեսէք տեսարք, չկարծէք թէ հաւատք չունիմ ձեր վրայ
ամէնքդ ալ լաւ զինուորներ էք, զորս սիրով կ'ուզէի
բանակներուս շարքերուն մէջ ունենալ
բայց Վարդանը եթէ միայն ինձ ծառայել յօժարէր
ինք Պոմպէոս մը կ'ըլլար
ես ալ երկրորդ Թէոդոս Մեծ
եւ ոչ թէ փոքր՝ ինչպէս կ'ըսեն ինձի համար...

Արդէն քիչ մ'ալ այդ պատճառաւ ընտրեցի օգնել ձեզի
բանակ դրկել ձեր երկիրը պաշտպանելու
որպէսզի ձեր Վարդանը քաջ համը առնէր
հոռվմէական լեզոններու հրամայելուն
եւ օր մ'ալ անցներ գլուխն անոնց ու նուաճէր
մեր ասպատակ թշնամիները բոլոր
եւ անշուշտ համայն քրիստոնէութեան:

Սակայն կարծեմ իմ օրերս լրացած են. ալ ոչ մէկ բան պիտի տեսնեմ...
օղը տաք է, բայց ջերմութեան ալիք է
եւ կը զգամ թէ ուժերս զիս կը լքեն...

Իսկ Մարկիանոսն ինչպէս կը տեսնէք
կա՛մ կրկեսին խաղերուն է, կամ կիներու հետ գինարբուքի...
ու խորհիլ թէ ես իմ ձեռքովս զինքը քեռայր կարգեցի
կեսար ըրի գահակից
եւ հիմա ան ոչ իսկ կու գայ այցելութեան
ոչ ալ նոյնիսկ կայսերական խորհուրդի կամ նիստերուն:

Եւ ան վաղը իմ յաջորդս պիտի ըլլայ...

Չեմ գիտեր թէ ի՞նչ է ինչպէ՞ս պիտի ընէ
եւ ինչ ձեռով պիտի վարուի ձեզի հետ.
միայն գիտեմ որ կատարեալ ամբարիշտ մ'է
տաւը տեսակ խաչ ու յոռութք կախած վիզէն...

Զգո՛յ՜ իրմէ, ինչպէս նաեւ մանկկալիկ շուրջիններէն:

Իսկ դուք բոլորդ մնացէք միաբանած ու զօրաւոր:

Վերջին խօսք մը. դիտեցէ՛ք դուք ուշադիր

սա գետինը զարդարող խճանկարն հրաշակերտ

զոր այստեղ յոյն վարպետներն են յօրիներ.

Տեսէ՛ք ինչպէս միշտ ոյժն է որ ի պատուի է

միշտ մեծն է որ փոքրը կ'ուտէ

զօրաւորն է որ կը յաղթէ եւ իրաւունք կը շահի

ինչպէս ամբողջ կենդանական աշխարհին մէջ

թռչուններուն ու ձուկերուն, նաեւ մարդոց...

Ուրեմն ինչո՞ւ չխորհիլ թէ աստուածային արդարութիւնն ալ ա՛յդ է...:

24 Օգոստոս 1985

Սուրբ Մարկոսի զանգակատունն առաջինն է որ կը զարնէ վեց անգամ.
Յետոյ ամբողջ Վենետիկն է որ կը հնչէ կ'արձագանգէ զանգակներու
դողանջով.

Մայրամուտի հսկած արեւն ալիքներուն տանիքներուն ոսկեփողջի կը մաղէ.
Աղանիներն հետզհետէ կը հեռանան դէպի սիւներն ու գմբէթներն արեւաշող
տաճարին.

Ժամը վեցն է. օրը Ուրբաթ. 8 Սեպտեմբեր 1717.

Եւ Տօժերու Պալատին

Մեծ դահլիճին մկարագարդ ձեղումին տակ՝ դուքսը հագած ծիրանեգոյն ու
կնգումով պատմուման

Նոր կնքուած, դեռ չոլորուած մագաղաթ մը կ'երկարէ

Վանականի մը սեւազգեստ որ Մխիթար Արքան է

Ծունը դրած ու խոնարհած իր առջեւ.

— Խնդրե՛մ հայր իմ, խնդրեմ ելէ՛ք. ասկէ վերջ ալ — ինչպէս առաջ — դուք
միայն

Մեր Սրբազան Տիրոջ առջեւ պարտիք այսպէս խոնարհիլ.

Իրաւ է թէ մագաղաթն այս գոր քիչ առաջ Ծերակոյտը վաւերացուց, իմ
հպատակս ըրաւ ձեզ

Եւ մնայուն բնակիչը այս քաղաքին — քաղաքներու թագուհիին — որուն
առջեւ արդարեւ

Քի՛չ է որքան երկրպագէք հմայուած...

Այս պատմական փաստաթուղթով մաւն ձեզի եւ ձեր յաջորդ արքաներուն կը
տրուի

Այն ամայի անշուք կղզին որ դարերով բորոտներու աքսորավայր է եղած
Եւ ուր արդէն դուք հաստատուել ու հիմներ էք ձեր Ուխտն ա՛յնքան հալած-
ուած:

Կը յուսամ որ ձե՛ր շնորհիւ այդ լերկ կղզին օր մը այնպէս կը ծաղկի

Որ փոխանակ խորշանք, գարշանք առթելու — ինչպէս բոլոր պարտուած-
ներն ու անկեալներն աշխարհի

Ընդհակառակն ապագային աշխարհի չորս ծագերէն

Հետաքրքիր հիացողներ դէպի իրեն կը քաշէ

Աքսորավայրն ուխտատեղի կը դառնայ

Լքուածներու գերեզմաննոցն այդ անանուն կ'ըլլայ կոթող յաղթանակի
— անմահութեան յուշարձան

Որովհետեւ, հա՛յր իմ զգօն, մեր կրած դառն պարտութենէն վերջ այլեւս մեզ
համար ալ գաղտնիք չէ

Թե իրական յաղթանակը որ կը տեսէ դարերն ի վեր անարգել
Աշխարհակոյ արշաւանքն ու աշխարհակալ տիրացումը չէ՛ երբեք.

Ի՞նչ կայ այսօր ձեր Տիգրանէն, մեր Կեսարէն, Կարողութե՛ն՝ մեծ կոչուած

— Երկու քաղաք, երեք օրէնք, մարդավայել կարգուսարք:

Հապա ի՞նչ կայ սարսափազդու Աթթիլայէն, Շէնկիզ Խանէն, Թիմուրէն

— Անուն մը լոկ արիւնոուշտ

Իսկ ի՞նչ արդեօք պիտի մնայ չորս ծովերու եւ անհամար կղզիներու, գաղութ-
ներու, բերդերու տէր Վենետիկեան Հասարակապետութենէն մեծագօր
Որուն արդէն վերջալոյսն է որ կ'ողջունեն, անցնող ամէն օրուան հետ

— Ի՛նքը գուցէ, Վենետիկը, Աստղիկին պէս ծովէն ծնած, փրփուրներէն
գոյացած

Այս անսոգիւտ միակ ծաղիկն ստեղծագործ ու շինարար գերմարդկային
համնարին

Որ զերդ անգին ոսկեդրուագ ականակոտ գոհարատուփ վիթխարի
Պիտի մնայ սրտին սեղմած բոլոր գանձերն աշխարհի հինգ մասերուն
Որոնց սակայն ամենաթանկ եւ անմահ անզուական մարգարիտը պիտի
ըլլայ ձեր կղզին

Բազմատաղանդ բազմաշարշար ձեր փոքր ազգին

Ծով արցունքին

Սուրբ քրտինքին

Աչքի լոյսին

Ամբողջ փայլը, ազնիւ փառքը ամփոփած:

15-12-1976

Թիւիլըրիի պալատին պիտըրմայէր կահաւորուած դահլիճին մէջ Լուի-Ֆիլիպ
թագաւոր
Ներկայութեամբ վարչապետին Կիզոյի, ինչպէս նաեւ մէկ քանի հատ շատ
պրկուած անձերու

Ունկնդրութիւն շնորհած է Յովհաննէս պէյ Տատեանի
Որ ուշադիր ունկ կը դնէ արքայական հանդիսաւոր խօսքերուն
Քանի բնաւ վստահ չէ թէ յաջորդ տարի կրնայ զանոնք նորէն լսել նոյն
բերնէն.

— Ուրախ եմ որ բարեկամս Սուլթան Մէհիտմ յանձնարարէր է ձեզ ինծի
խնդրելով որ ձեզի յանձնեմ ռազմանիւթի վերաբերեալ Ֆրանսայի վերջին
գիտերն ու գաղտնիքները բոլոր
ինչ որ անշուշտ կը նմանի՝ ուտքով նամբայ գացողին իմ կառքիս ձին
ուզելուն...

Սակայն նորէն ուրախ եմ որ ձեր Սուլթանը երբ կ'աշխատի իր բանակը
վերակազմել արդիական ձեւերով

Ֆրանսական զէնուզարդը կը նախընտրէ միւսներէն
հաւանաբար հրապուրուած մեր սրբազան ճիւղին անհաւասար մարտերէն
որոնք մեզի միայն պարտքեր եւ ապստամբ երիտասարդներ ձգեցին,
եւ որոնց մէջ՝ ան կը կարծէ թէ զէնքերուն որակն էր որ դեր խաղաց
առանց բնաւ խորհելու թէ թնդանօթով նշան առնող աչքն է, միտքն է
կարեւոր

ու աւելին՝ թիրախն ու կէտ նպատակին եւ վառ տեսիլքն յաղթանակի ցոյց
տուող ձեռքն է հզօր
այլ ոչ թէ ինք՝ թնդանօթը որ գործիք մ'է պարզունակ...

Ես կրկնակի ուրախ եմ որ բարեկամս ձեր Սուլթանը զինուորական նորու-
թիւններ ներմուծելու քովն ի վեր
իր ընդարձակ կայսրութեան մէջ ճարտարարուեստ ալ կը բաղձայ ունենալ
անշուշտ Պոլսոյ շրջակայքը՝ ձեռքի տակ
որպէսզի գէթ իր պալատին, կանանոցին եւ պետութեան աւագներուն սո-
վորական կարիքները գոհացուին
մինչ պերճաշուք ու ծանրագին ապրանքները շարունակենք մենք հայթայթել
մեր փոխ տուած ոսկիներուն փոխարէն
ինչպէս նաեւ մեքենաներն ու գործիքներն ու կազմածներն իրաքանչիւր գոր-
ծատան
որոնք մէկմէկ արհեստանոց պիտի ըլլան՝ ուր մեր դրկած մասնագէտներն

հազարաւոր լաւ վարպետներ պիտ' հասցենէն ձեր ընդունակ տարրերէն որոնք յետոյ անտարակոյս պիտի ուզեն աւելի լաւ պայմաններով եւ լուսաւոր ապագայով մեր երկրին մէջ աշխատիլ ու մասնակցիլ ճարտարարուեստ կոչուող դեռիմ աշխարհակոյ գործին..

Դարձեալ ուրախ եմ մեծապէս որ Սուլթանը իմաստութիւնն է ունեցեր այս պաշտօնը յանձնելու ձեզի նման լուրջ ու պարկեշտ անձի մը որ այդ ընդունակ տարրերէն է, քրիստոնէայ մեզի պէս ինքնօգնութեամբ սորված սերտած մեքենական գիտութիւններն ու մեր լեզուն անմասն որ անկասկած բանալին է տիեզերքի մշակոյթին եւ պայմանը քաղաքակիրթ նկատուելու — նոյնիսկ առանց քաղաքավար ըլլալու — իսկ դուք տիպար քաղքենին էք զոր դրացի դժուարահաճ մեր զարմիկներն «իսկական մեծ ճէնթըլմէն մը» կոչած են քանի որ դուք անոնց հետ ալ բաւական մեծ գումարներու գործեր ըրած եւ միջնորդէք չէք պահանջած — ինչպէս մեզմէ մինչդեռ այդ բանն աւելի քան բնական էր մեզի համար, ինչպէս արդար ձեր իրաւունքն այսօրինակ գործերու մէջ պետական նոյնիսկ մեզի հակառակն է որ անսովոր զարմանալի անբնական կը թուի ինչպէս բոլոր այս ձեռնարկներն արեւմուտքէն ճարտարարուեստ ներածելու ձեր պետութեան ի հաշիւ երբ դուք կրնաք ձեր անձնական կարողութեամբ եւ նիւթական միջոցներով նոյն գործատուները հիմնել ինչ որ անշո'ւշտ պիտի ընէր եթէ ձեր տեղ հրեայ մ'ըլլար մեր դիմաց օգտուելով տրամադիր մեր կեցուածքէն՝ թափանցելու դէպի միջին արեւելք, եւ յատկապէս առեւտրի գործակցութիւն հաստատելու՝ տակաւին կոյս եւ ընդարձակ շուկաներու եզերքին որպիսին են Փոքր Ասիոյ ծայրը թառած Զմիռնիան գեղազուարճ կամ Պոլիսը վեհապանձ...

Ու վերջապէս շատ ուրախ եմ որ այս պատեհ առիթով ներկայութեամբ նախարարաց խորհուրդիս ձեզ կը պատուեմ ասպետական Ֆրանսայի անունով, ու այստեղ ձեզ Ասպետ Պատուոյ Լեգէոնի կը կարգեմ ինչ որ կարծեմ գոհ կը ձգէ ձեր Սուլթանն ալ որ պէշութիւն շնորհած է ձեր տոհմին թեպէտ այնտեղ այս տիտղոսներն ապահով չեն որքան մեր մօտ, նոյնիսկ երբեմն իրենց վրայ շանթ ու որոտ կը քաշեն — կրնա՞ք ըլլալ պէշ կամ փաշա, բայց ատիկա արգելք մը չէ որ մէկ օրէն միւսն

առաջնորդեն ձեզ բանտ եւ կամ կախաղան
 ինչպէս կ'ըսէ մեր պատմաբան վարչապետը Պարոն Կիզոն՝ թէ եղեր է
 Տիգեաններու պարագան
 որոնց համար ֆրանսական իշխանութիւնն այն ժամանակ չէ յաջողեր
 միջամտել կամ չէ ուզեր յաջողիլ
 հակառակ որ կայծուիկ էր այդ ընտանիքն ու մեր երկրին համակիր.
 մինչդեռ այստեղ նման վախեր չէք ունենար եթէ ուզէք հաստատուիլ
 ձեր յարգարժան հարստութեամբ կոմս ալ կ'ըլլաք, պատոն ալ
 ամէն մարզի մէջ կը մրցիք ձեզի նման հրեաներու հետ եկուոր
 նոյնիսկ երբեմն անոնցմէ վեր դիրքերու ալ կը հասնիք
 եթէ միայն հրաժարիք ձեր ոգեկան կէթոյէն
 մոռնաք ինչ որ ձեզ կը բաժնէ մեր բարքերէն, առնէք ինչ որ ձեզ կը տրուի մեր
 փառքերէն
 ձուլուիք մեր մէջ որ մեզի հետ բարձրանաք, ու շահն ըլլայ երկուստէք.
 ըսէ՛ք խնդրեմ Պարոն Տատեան, ասկէ տարբեր ի՞նչ գօմբլիման կրնայ ընել
 Ֆրանսայի թագաւոր մը ձեր մասին
 ողջա՛մբ գացէք եւ սիրալիւր ողջոյններս հաղորդեցէք յառաջադէմ
 ձգտումներով ցնորամիտ Սուլթանին:

9-1974

ՈՒՂԻՆԵՐ

Ե.

Այս մէկ հեղ չէ, երկու չէ
Ամէն անգամ
Երբ նոյն տեղը կը հասնինք
Գնացքն ամբողջ իր լոյսերը կը մարէ
 շուրջ մէկ վայրկեան
 յետոյ նորէն կը վառէ

Այս մէկ հեղ չէ, երկու չէ
Ամէն անգամ երբ նոյն տեղին կը մօտենանք
Ոչ արկած կայ ոչ շինութիւն ոչ վտանգ
Միայն հեռուն տուն մը կայ
 պատուհան մը լուսաւոր
 որուն վիճակն անթափանց
 մէկ կը գոցուի մէկ կը բացուի վեր ու վար
Մինչեւ գնացքն անցնի երթալ
Ու լոյսերը վառէ դարձեալ յաղթապանծ

Միայն ասո՞ր ինչ ըսել —
Կառախումբը միշտ նոյնը չէ որ կը վառէ կը մարէ...
Այս պատմութիւնն այս գնացքով անեղծուած կը դառնայ
Եթէ միայն չգիտնամ
Թէ ով է ան որ խենթի պէս կը վազվզէ ծալրէ ի ծալր գնացքին
Թէ ով է ան — այն լուսաւետ երեւոյթը որ կը ցոլայ
 վարագոյրին բացխիտմէն ակնթարթ
Եւ թէ ի՞նչ է որ կը տանի շոգեկառքը թափփելով ու յորդելով լեռ ու դաշտ
 մինչեւ բերանն լեփլեցուն...

22-11-1984, Ծէգի-սիր Մարն

2.

Նայիլ դուրս

Պատուհանէն տողանցող

Անտառներուն ու դաշտերուն, գիւղերուն ու տուններուն

Եւ ըսել

Այս տունին մէջ — այդ միւսին մէջ — ծնած մեծցած բնակած

Սա հեռուիցին տէրը ըլլալ կրնայի — տէրը շուրջի հողերուն

Կամ պարտեզին ուր կը ծաղկին խնձորենիքն կեռասենիքն ու ծաղիկները բոլոր

Ջոր եւ տնկած կ'ըլլայի —

Կրնայի սա մարդն ըլլալ

Որ կը քալէ գլխահակ դաշտերուն մէջ միայնակ դէպի պուրակն հեռակայ

Չտեսնելով չխորհելով իմ վրաս

Մտածելով միմիայն

Հողին մասին ու երկինքին որոնց միջեւ կանգնած է ինք առանձին —

Կրնայի սա մանուկն ըլլալ որ երկչոտ

Ջեռք կը շարժէ կառախումբին ու ինձի

Առանց երբեք գիտեսնելու ճանչնալու —

Եւ կամ ըլլալ այդ կառքին մէջ որ կ'արշաւէ սրընթաց

Գնացքին հետ ճոյն ուղղութեամբ եւ կամ թէ ճիշդ հակառակ

Տարբերութիւն չկայ բնաւ — միշտ հեզասան ոլոր մոլոր ճամբաներէ որոնք
միշտ

Կը տանին զինք ճակատագրին առանց որ ինք անդրադառնայ — եւ կամ թէ

Ընդհակառակն անոր վրայ մտածէ ու փափաքի այս գնացքին մէջ ըլլալ

Իմ տեղս ըլլալ — ես ըլլալ

Ինչպէս որ ես կը մտածեմ որ կրնայի ինքն ըլլալ

Ուրիշն ըլլալ — այն միւսը որ կը պտտի դաշտին մէջ

Պարտեզին մէջ վարդի թուփը կը յօտէ

Կը հոտոտէ մանուխան

Կը բնակի սա տունին մէջ որուն ճակտին կարտէնիաներ կը վառին

Ու պահ մը վերջ կ'անհետանան աչքերէս:

25-11-1984, Լա Ֆերթէ-սու-Փուար

2. ԽՐԱԽՈՒՆԻ